

Քարայտակին տեղւոյն վրայ ի հնումն կառուցուած էր Դասապարտրեան Մասուղը: Այստեղ Պիղատոս Յիսուսը ներկայացուց եւ ըսաւ անաւ այրի ցձեզ խորհրդաւոր խօսքը: 1187էն առաջ այս մատուռը վերանորոգուած կը թուի, բայց յետոյ քրիստոնեաներու ձեռքէն առնուած է: ԺԼ. դարու կիսուն ուխտաւոր մը Ջաղանաց եկեղեցիին վրայ խօսելէ առաջ, կը գրէ. «Զօրանոցէն դուրս ելած ժամանակ, նշմարեցինք խիստ մօտիկ հին փոքր եկեղեցիի մը հետքերը. հոն կային տակաւին քանի մը քառակուսի սիւներ և նրկարներու հետքեր կրող կամարի մը մնացորդը, հակառակ ջանքերուս չկրցի որոշել թէ անոնք ինչ կըրնային ներկայացնել»:

«Ահա այդ ցձեզ» (Ecco-Homo) կամարը Ջաղանաց եկեղեցիին շրջափակին մէջ է: ԺԶ. դարէն ըսկըսեալ այդ անունը առած է, վասնզի այդ ժամանակէն սկսեալ կամարաքիւի մը վրայ պատին մէջ զետեղուած են ֆարայասակին երկու քարերը, որոնցմէ մէկուն վրայ, ըստ աւանդութեան, մեր Փրկիչը կը կենար, ու միւսին վրայ՝ Պիղատոսը, երբ այս վերջինը «անաւ այրի ցձեզ» բառերը արտասանեց: ԺԴ-ԺԶ դարերու ուխտաւորներ նոյն քարերուն գոյութիւնը կը հաստատեն և կը յիշեն թէ կամարին մէջ հաստատուած են վանականներու ձեռքով (Bar. gd. էջ 97-103):

Պիղատոսի պալատին մէջ գտնուած Փրկչին պատկերին և կեցած քարին վրայ աւանդական տեղեկութիւն մը Antonius Martyr 570 ին կը գրէ. «Քրիստոսի պատկերը կենդանի կերպով նկարուած և զետեղուած էր Պիղատոսի պալատին մէջ: Փրկչին պատկերն էր գեղեցիկ, փոքր, փափուկ ոտքեր, անձ մը սովորական բարձրութեամբ, դէմքը գեղեցիկ, մազերը դան-